ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. <u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>
   Էդուարդ Մարտիրոսյան

2. <u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>
   «Հայկական Ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրեն

3. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ</u>
   Մեծ Բրիտանիա, քաղաք Լոնդոն, ապրիլի 14-ից 17-ը, 2026թ.

4. <u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>
   Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիա (ՇԿՀԱ)

5. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>

   Մասնակցություն Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի Կառավարիչների խորհրդի (ԿԽ) և Ռազմավարության, կառավարման և նշանակումների կոմիտեի (ՌԿՆԿ) նիստերին

6. <u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>

   Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիան (ՇԿՀԱ) համաշխարհային միջուկային էներգետիկայի ոլորտում առանցքային և բարձր հեղինակություն ունեցող միջազգային կազմակերպություն է, որի գործունեությունը ուղղված է ամբողջ աշխարհում ատոմային էլեկտրակայանների անվտանգ, հուսալի և արդյունավետ շահագործման ապահովմանը: Կազմակերպությունը միավորում է տարբեր երկրների ատոմակայան շահագործող ընկերություններին՝ ստեղծելով եզակի համագործակցային հարթակ, որտեղ ձևավորվում է փորձի փոխանակման, գիտելիքների փոխանցման և լավագույն միջազգային պրակտիկաների ներդրման միասնական մշակույթ: ՇԿՀԱ-ի գործունեության հիմքում ընկած են փոխադարձ վստահության, մասնագիտական համերաշխության, թափանցիկության և շարունակական կատարելագործման սկզբունքները: Կազմակերպությունը հետևողականորեն իրականացնում է համապարփակ գնահատումներ և վերլուծություններ, որոնք ուղղված են շահագործման մակարդակի բարձրացմանը և անվտանգության մշակույթի ամրապնդմանը տարբեր տարածաշրջաններում:
   Ռազմավարության, կառավարման և նշանակումների կոմիտեի (ՌԿՆԿ) նիստի ընթացքում քննարկվել են կազմակերպության ռազմավարական զարգացմանը, կադրային քաղաքականությանը և կառավարման կառուցվածքի կատարելագործմանը վերաբերող հիմնարար հարցեր: Նիստի ընթացքում գնահատվել է ՇԿՀԱ-ի ռազմավարական ծրագրի իրականացումը, հաստատվել են կազմակերպության կայուն առաջնորդության ձևավորման մոտեցումները, ինչպես նաև ներկայացվել են առաջարկություններ տարածաշրջանային կենտրոնների և անդամ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Կառավարիչների խորհրդի (ԿԽ) նիստի ժամանակ ամփոփվել են ՇԿՀԱ-ի ընթացիկ գործունեության արդյունքները, ներկայացվել են տարածաշրջանային կենտրոնների հաշվետվությունները, ներառյալ՝ գործընկերային գնահատումների և տեխնիկական փոխանակումների արդյունքները: Հատուկ ուշադրություն է դարձվել անվտանգության մակարդակի բարձրացմանը, թվային տեխնոլոգիաների ներդրմանը և ատոմային էլեկտրակայանների շահագործման կայունության ապահովմանը: Քննարկվել են կազմակերպության բյուջեն և առաջիկա ծրագրերը, այդ թվում՝ համաշխարհային միջոցառումները, վերապատրաստման նախաձեռնությունները և անվտանգության մշակույթի զարգացման ուղղությամբ իրականացվող քայլերը:
Նիստերի արդյունքներով հաստատվել են կազմակերպության ֆինանսական փաստաթղթերը, 2026 թվականի հիմնական միջոցառումների օրակարգը և հետագա գործունեության առաջնահերթությունները:
Նիստերը կայացել են կառուցողական և արդյունավետ մթնոլորտում՝ վերահաստատելով ԱԷԿ օպերատորների գլոբալ գործընկերության զարգացման ՇԿՀԱ-ի առաքելության՝ ատոմային էլետրակայանների շահագործման ոլորտում անվտանգության, հուսալիության և մասնագիտական գերազանցության բարձրագույն մակարդակի հասնելու ընդհանուր նպատակի կարևորությունը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Առաջին օրը նիստը բացեց ՇԿՀԱ-ի նախագահ Խոսե Գազոն, ով ողջունեց մասնակիցներին և ընդգծեց քննարկվող հարցերի կարևորությունը՝ կազմակերպության հետագա զարգացման տեսանկյունից: Այնուհետև հաստատվեց նիստի օրակարգը:
Նախագահը հիշեցրեց, որ քննարկման կենտրոնում կլինի արտահանման վերահսկողության և պատժամիջոցների հարցը, որը պահանջում է հարթ, համարժեք մոտեցում՝ պահպանելով միջազգային իրավական նորմերը, միաժամանակ ապահովելով կազմակերպության արդյունավետ աշխատանքը:
Հանդես եկավ նաև Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի գործադիր տնօրեն Նաոկի Չիգուսան: Իր ելույթում ներկայացրեց լայնածավալ և ռազմավարական նշանակություն ունեցող նախաձեռնություն, որի հիմնական նպատակը ատոմակայանների աշխատանքի արդյունավետության բարձրացման գործընթացների արագացումն է համաշխարհային մակարդակով: Նա ընդգծեց, որ այս նախաձեռնությունը ձևավորվել է՝ հաշվի առնելով ոլորտի արդի մարտահրավերները և զարգացման նոր պահանջները, որոնք ենթադրում են ավելի համակարգված և ճկուն մոտեցումներ: Չիգուսան նաև նշեց, որ ներկայացված նախաձեռնությունը կրում է համապարփակ և համակարգային բնույթ՝ ընդգրկելով ինչպես տարածաշրջանային կենտրոնները, այնպես էլ բոլոր անդամ կազմակերպությունները՝ ապահովելով նրանց ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը գործընթացում: Նա ներկայացրեց ծրագրի իրականացման փուլային մոտեցումը՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր փուլ ուղղված է կոնկրետ արդյունքների ձեռքբերմանը և համակարգի շարունակական կատարելագործմանը:

ՌԿՆԿ նիստի ընթացքում ներկայացվեց տեղեկատվություն միջազգային պատժամիջոցների և արտահանման վերահսկողության ընթացիկ գործընթացների վերաբերյալ, որոնք ազդեցություն ունեն Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի գործունեության վրա:
«Արտահանման վերահսկողություն և պատժամիջոցներ՝ լիցենզավորման մոտեցում» զեկույցով հանդես եկավ Ջեյդ Ջոնսը:
Զեկույցում շոշափեց հետևյալ հիմնական ուղղությունները՝
-անհրաժեշտություն ապահովելու միասնական, թափանցիկ և ադապտիվ մոտեցում արտահանման լիցենզիաների մշակման և միջազգային ու ազգային կարգավորիչ մարմինների հետ համագործակցության հարցում
-պատժամիջոցների գործող ռեժիմների վերլուծություն՝ հատուկ երկրների նկատմամբ, և դրանց ազդեցությունը ՇԿՀԱ-ի գործունեության վրա
-արտահանման վերահսկողության կանոնների անտեսման ռիսկեր՝ ներառյալ իրավաբանական պատասխանատվությունը, վնասը և որոշակի ծրագրերի դադարեցումը
-իրավաբանական մոտեցումների օրինակներ՝ նմանատիպ միջազգային կազմակերպություններում և գործընկերային կառույցներում:
Իրանի վերաբերյալ նշվեց, որ Մեծ Բրիտանիայի նոր պատժամիջոցները Atomic Energy Organization of Iran-ի նկատմամբ բարդացնում են համագործակցությունը, իսկ NNPD Iran-ի լիցենզավորման գործընթացի վերաբերյալ պահանջվել են լրացուցիչ խորհրդատվություններ:
Ռուսաստանի վերաբերյալ ներկայացվեց, որ սահմանված նոր պատժամիջոցները ներառում են մի շարք կազմակերպություններ և բանկեր, ինչը կարող է ազդել ֆինանսական գործարքների և համագործակցության վրա. Լոնդոնյան գրասենյակը իրականացրել է համապատասխան ստուգումներ:
Լիցենզավորման գործընթացների մասով նշվեց, որ OIEL և SIEL հայտերի պատրաստումը շարունակվում է՝ համագործակցելով տարածաշրջանային կենտրոնների և Export Control Joint Unit-ի հետ՝ անհրաժեշտ փաստաթղթերը հավաքելու և պահանջները հստակեցնելու նպատակով:
Նշվեց նաև, որ VPN ծառայությունների սահմանափակումները Ռուսաստանում կարող են ազդել Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի աշխատանքային գործիքների վրա, այդ թվում՝ առցանց թարգմանության հարթակների, ինչպես նաև WhatsApp և Telegram հավելվածների օգտագործման վրա:
Բացի այդ, Փարիզյան կենտրոնի հետ իրականացվում է աշխատանք՝ իրադարձությունների հաղորդագրությունների (WER) ուղեցույցների վերանայման ուղղությամբ, որի հրապարակումը նախատեսվում է 2026 թվականի ապրիլին՝ նպատակ ունենալով բարելավել հաղորդումների որակը և ապահովել միասնական մոտեցում:
Նիստում հնչեցին նաև դիտարկումներ միջազգային համագործակցության վրա ազդող արտաքին գործոնների վերաբերյալ, մասնավորապես՝ աշխարհաքաղաքական զարգացումների, արտահանման վերահսկողության և պատժամիջոցների ազդեցության մասին: Ընդգծվեց, որ այս պայմաններում առավել կարևոր է դառնում կազմակերպության ներսում համակարգված մոտեցումների ձևավորումը և ռիսկերի արդյունավետ կառավարումը:

Ռազմավարության, կառավարման և նշանակումների կոմիտեի (ՌԿՆԿ) փակ նիստի շրջանակում ՇԿՀԱ-ի կառավարման և ռազմավարական նշանակության մի շարք կարևոր հարցեր ենթարկվեցին խորքային քննարկման:
Նիստի ընթացքում տարածաշրջանային կենտրոնների նախագահները ներկայացրեցին իրենց տարածաշրջաններում անցկացված քննարկումների արդյունքները՝ կապված Կառավարիչների խորհրդի կառուցվածքի հնարավոր փոփոխության հետ: Քննարկումների հիմքում ընկած էր Շանհայում հինգերորդ տարածաշրջանային կենտրոնի ձևավորման գործընթացը, որը պահանջում է կառավարման համակարգի վերանայում և հարմարեցում նոր իրողություններին: Նշվեց, որ նոր կենտրոնի լիարժեք ինտեգրումը պահանջում է ապահովել հավասարակշռված ներկայացվածություն և արդյունավետ մասնակցություն Կառավարիչների խորհրդում: Մասնակիցները քննարկեցին տարբեր մոտեցումներ՝ ուղղված կառավարման կառուցվածքի ճկունության և արդյունավետության բարձրացմանը՝ միաժամանակ պահպանելով կազմակերպության հիմնական սկզբունքները:
Փակ նիստի ընթացքում առանձնահատուկ ուշադրության կենտրոնում էր Հունգարիայի MVM Ltd. ընկերության կողմից ներկայացված դիմումը՝ կապված տարածաշրջանային պատկանելության փոփոխության հետ, որը քննարկվեց բազմակողմանի և խորքային ձևաչափով՝ ՇԿՀԱ կառավարման մարմինների շրջանակում:
Նշվեց, որ MVM Ltd. ընկերությունը հանդես է եկել նախաձեռնությամբ՝ վերանայելու իր տարածաշրջանային պատկանելությունը և միանալու Փարիզյան կենտրոնին: Տվյալ առաջարկը նախապես ստացել էր Փարիզյան կենտրոնի ղեկավարության աջակցությունը, ինչը վկայում էր նախաձեռնության նկատմամբ առկա հետաքրքրվածության և համագործակցության ընդլայնման պատրաստակամության մասին: Միևնույն ժամանակ քննարկումների ընթացքում շեշտադրվեց, որ նմանատիպ կարևոր որոշումների ընդունումը պահանջում է համապարփակ և հավասարակշռված մոտեցում՝ հիմնված բոլոր ներգրավված տարածաշրջանային կենտրոնների դիրքորոշումների լիարժեք հաշվառման վրա: Ընդգծվեց, որ յուրաքանչյուր տարածաշրջանային կառավարման մարմին պարտավոր է ներկայացնել իր հստակ և պաշտոնական դիրքորոշումը՝ համաձայն ՇԿՀԱ-ի կառավարման սկզբունքների և ընթացակարգերի:
Ես, հանդիսանալով ՇԿՀԱ-ի Մոսկովյան կենտրոնի կառավարիչների խորհրդի նախագահ, ներկայացրեցի իմ առաջարկը, ըստ որի նպատակահարմար է դիտարկել MVM Ltd. ընկերության միացումը Շանհայի տարածաշրջանային կենտրոնին: Առաջարկը հիմնավորվեց կազմակերպության ռազմավարական զարգացման նոր ուղղություններով, ինչպես նաև Շանհայի կենտրոնի ձևավորման և հզորացման առաջնահերթությամբ՝ որպես ապագա լիարժեք տարածաշրջանային կենտրոն:
Հատուկ ընդգծվեց, որ Շանհայի կենտրոնի ինստիտուցիոնալ կայացումը հանդիսանում է ՇԿՀԱ-ի զարգացման կարևորագույն փուլերից մեկը, և նոր անդամների ներգրավումը կարող է էականորեն նպաստել տարածաշրջանային հավասարակշռության ապահովմանը, ինչպես նաև գլոբալ համագործակցության ընդլայնմանը:
Արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ ինչպես MVM Ltd. ընկերության՝ Փարիզյան կենտրոնին միանալու դիմումը, այնպես էլ Մոսկովյան

կենտրոնի կողմից ներկայացված՝ Շանհայի կենտրոնին միանալու առաջարկը կներկայացվեն Կառավարիչների խորհրդի քվեարկությանը՝ ապահովելով թափանցիկ և հիմնավորված որոշման կայացման գործընթաց:

Երկրորդ օրը ՇԿՀԱ-ի գործադիր տնօրեն Նառկի Չիգուսան հանդես եկավ ոլորտի գործունեության վերաբերյալ ընդարձակ զեկույցով: Նա ներկայացրեց միջուկային էներգետիկայի ոլորտի ընդհանուր վիճակը՝ անդրադառնալով վերջին ամիսների հիմնական զարգացումներին, ձեռքբերումներին և առկա մարտահրավերներին: Զեկույցում ընդգծվեց, որ ոլորտը շարունակում է զարգանալ՝ միաժամանակ բախվելով նոր ռիսկերին, որոնք պահանջում են համակարգված և արագ արձագանք:

Չիգուսան նաև ներկայացրեց ոլորտի աշխատանքի հիմնական ցուցանիշները՝ անդրադառնալով անվտանգության մակարդակին, արտադրողականությանը և միջազգային համագործակցության ակտիվությանը: Նրա ելույթից հետո տեղի ունեցավ բաց քննարկում կառավարիչների հետ, որի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան արտահայտել իրենց դիտարկումները և առաջարկությունները:

Նիստի երկրորդ մասում հանդես եկան տարածաշրջանային կենտրոնների տնօրենները՝ ներկայացնելով իրենց տարածաշրջաններում ոլորտի գործունեության վերաբերյալ մանրամասն հաշվետվություններ:

Փարիզյան կենտրոնի տնօրեն Սատու Կատայալան հանդես եկավ զեկույցով՝ ներկայացնելով տարածաշրջանի կայանների արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները և դրանց ընթացիկ արդյունքները:

Նա նշեց, որ մի շարք կայաններ գտնվում են ուժեղացված վերահսկողության և նպատակային աջակցման ներքո՝ հատկապես այն դեպքերում, երբ արձանագրվում են կատարողականի նվազում կամ բարելավման դանդաղ տեմպեր: Միաժամանակ մի խումբ կայաններ շարունակում են պահպանել բարձր և կայուն ցուցանիշներ՝ առանց լուրջ ռիսկեր առաջացնելու:

Զեկույցում առանձնացվեցին նաև հետևյալ հիմնական ցուցանիշային խմբերը.

- կայաններ՝ բարձր կայուն ցուցանիշներով և առանց էական խնդիրների,
- կայաններ՝ ընդլայնված մշտադիտարկման ներքո,
- կայաններ՝ պահանջող ուժեղացված ուշադրություն՝ ցուցանիշների նվազման պատճառով,
- կայաններ՝ բավարար վիճակում, սակայն շարունակական հետևողական վերահսկողությամբ:

Կենտրոնի տնօրենը ընդգծեց, որ հիմնական ուշադրությունը կենտրոնացված է գործառնական արդյունավետության, օպերատորական կարգապահության և անվտանգության մշակույթի ամրապնդման վրա: Հատուկ շեշտադրվեց վթարային պաշտպանության գործարկումների (SCRAM) նվազեցման ցուցանիշը, որը դիտարկվում է որպես կարևոր կատարողական չափանիշ:

Նա նաև նշեց, որ բարձր ռիսկ ունեցող կայանների համար կիրառվում են նպատակային աջակցության ծրագրեր, խորացված վերլուծություն և փորձի փոխանակման մեխանիզմներ: Այս մոտեցումը թույլ է տալիս ոչ միայն արձագանքել խնդիրներին, այլ նաև կանխարգելել դրանց խորացումը:

Ընդհանուր առմամբ, ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ տարածաշրջանում կա թե՛ կայուն առաջընթաց, թե՛ որոշ ուղղություններում

շարունակական բարելավման անհրաժեշտություն, որին ուղղված են Փարիզյան կենտրոնի գործող ծրագրերը:
Շանհայի կենտրոնի ներկայացուցիչ Չեն Հուան հանդես եկավ զեկույցով՝ ներկայացնելով կենտրոնի զարգացման ռազմավարական ուղղությունները և ապագա կազմակերպչական կառուցվածքի ձևավորման աշխատանքները:
Նա նշեց, որ մշակվել է հստակ բազմաստիճան կառավարման կառուցվածք, որը ներառում է հիմնական ուղղություններ՝ տեխնիկական ոլորտ, արդյունավետության գնահատում, անդամների աջակցություն և վերապատրաստում, նոր բլոկների աջակցություն, միտումների մոնիթորինգ, արտակարգ իրավիճակների արձագանք, փաստաթղթերի մշակման համակարգ, իրավական և լիցենզավորման գործընթացներ, մարդկային ռեսուրսներ, ֆինանսներ, տեղեկատվական համակարգեր և տվյալների պաշտպանություն, ինչպես նաև հաղորդակցություն:
Զեկույցում ընդգծվեց, որ ձևավորվում է միջազգային համագործակցության նոր մոդել՝ հիմնված երեք մակարդակով փոխգործակցության համակարգի վրա: Այս մոտեցումը նպատակ ունի ապահովել ավելի արդյունավետ և համակարգված համագործակցություն ՇԿՀԱ անդամների միջև: Միաժամանակ նշվեց, որ միջազգային փորձագետները ներգրավվում են խորհրդատվական գործընթացներում՝ զարգացման հեռանկարները գնահատելու և լավագույն փորձը ներդնելու նպատակով:
Չեն Հուան նաև ընդգծեց Շանհայի կենտրոնի ռազմավարական համահունչությունը ՇԿՀԱ-ի գլոբալ կառավարման սկզբունքներին՝ կարևորելով այլ տարածաշրջանային կենտրոններից մասնագետների ներգրավումը և փոխադարձ փորձի փոխանակումը:
Նշվեց, որ կենտրոնը շարունակելու է իր աշխատակիցներին ներգրավել այլ կենտրոնների առաքելություններում՝ ապահովելով միասնական աշխատանքային մշակույթ:
Ապագա կազմակերպչական կառուցվածքի շրջանակում արդեն պատրաստ է հնգամյա բիզնես պլանը, հաստատվել են հիմնական ղեկավար քաղաքականությունները և գործառնական սկզբունքները: Մշակվել է նաև հստակ կադրային ռազմավարություն՝ ներառյալ հիմնական պաշտոնների սահմանումը, համալրման գործընթացի մեկնարկը, վարձատրության և սոցիալական փաթեթների համակարգը:
Ֆինանսական մասով ներկայացվեց անդամավճարների վերաբերյալ առաջարկ, ինչպես նաև հնգամյա եկամտային կանխատեսում՝ հիմնված Շանհայի կենտրոնի ապագա անդամակցության և ՇԿՀԱ ծառայությունների ամբողջական կիրառման վրա:
Ընդհանուր առմամբ, զեկույցը ցույց տվեց, որ Շանհայի կենտրոնը անցում է կատարում համակարգված ինստիտուցիոնալ զարգացման փուլ՝ նպատակ ունենալով դառնալ լիարժեք տարածաշրջանային կենտրոն՝ բարձր մակարդակի միջազգային համագործակցությամբ և կայուն կառավարման կառուցվածքով:
Մոսկովյան կենտրոնի տնօրեն Վասիլի Ակսյոնովը և ես հանդես եկանք զեկույցով:
ՇԿՀԱ-ի Լոնդոնի գրասենյակի կողմից անդամների լիցենզավորման առաջարկը՝ արտահանման վերահսկողության և պատժամիջոցային սահմանափակումների ներքո, առաջացրել է լուրջ մտահոգություն և անորոշություն՝ մասնավորապես Հայկական ԱԷԿ-ում: Նման մոտեցումը վտանգում է ՇԿՀԱ-ի հիմնարար առաքելությունը՝ ատոմային էլեկտրակայանների շահագործման անվտանգության խթանումը ամբողջ աշխարհում: Այս նախաձեռնության կիրառումը կարող է խաթարել ՇԿՀԱ-ի գործունեությունը՝ սահմանափակելով կարևորագույն տեղեկատվության փոխանակումը անդամների միջև: ՇԿՀԱ-ի անդամներն իրենց գործունեության

շրջանակում մշտապես տարածում են արժեքավոր տեղեկատվություն՝ կապված շահագործման ժամանակ արձանագրված միջադեպերի, անվտանգության բացերի, գործընկերային գնահատումների և դրական փորձի հետ: Լիցենզավորման գործընթացը, ենթակա լինելով Մեծ Բրիտանիայի կառավարության վերահսկողությանը, կխթարի այս բաց հաղորդակցման մոդելը, վտանգելով ամողջ համակարգի արդյունավետությունը:

Հատկապես մտահոգիչ է այն փաստը, որ նման մոտեցման պարագայում ՇԿՀԱ-ի որոշ տարածաշրջանային կենտրոններ, այդ թվում՝ Մոսկվայի և Շանհայի կենտրոնները, կարող են հայտնվել մեկուսացման պայմաններում: Այս կենտրոնների անդամների՝ մասնավորապես Ռուսաստանի և Չինաստանի ատոմային ընկերությունների փորձը և տեխնոլոգիական առաջընթացը անփոխարինելի արժեք են ներկայացնում ՇԿՀԱ-ի ընդհանուր գործունեության համար:

Ակսյոնովը ներկայացրեց նաև Մոսկովյան կենտրոնի մասնակցությունը միջազգային նախաձեռնություններին և աշխատանքային խմբերին՝ շեշտելով, որ տարածաշրջանը ակտիվորեն ներգրավված է ինչպես տեխնիկական աջակցության, այնպես էլ լավագույն փորձի տարածման գործընթացներում: Նա կարևորեց նաև համագործակցությունը այլ տարածաշրջանային կենտրոնների հետ՝ հատկապես Շանհայի կենտրոնի ձևավորման և գլոբալ կառուցվածքային փոփոխությունների համատեքստում:

Զեկույցում անդրադարձ կատարվեց նաև ռիսկերի կառավարման և արտաքին սահմանափակումների ազդեցությանը, որոնք պահանջում են ավելի ճկուն և համակարգված մոտեցումներ՝ ապահովելու կազմակերպության կայուն գործունեությունը փոփոխվող միջազգային միջավայրում:

Ամփոփելով իր ելույթը՝ Վասիլի Ակսյոնովը նշեց, որ Մոսկովյան կենտրոնը շարունակելու է ուժեղացնել վերահսկողության և աջակցման մեխանիզմները՝ նպաստելով անդամ կայանների արդյունավետության բարձրացմանը և ՇԿՀԱ-ի ընդհանուր ռազմավարական նպատակների իրականացմանը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Նիստերի ընթացքում ընդունվել են մի շարք կարևոր որոշումներ և ձեռք են բերվել պայմանավորվածություններ, որոնք ուղղված են Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի (ՇԿՀԱ) կառավարման համակարգի կատարելագործմանը, գործունեության արդյունավետության բարձրացմանը և միջազգային համագործակցության ամրապնդմանը:

Մասնավորապես՝ հաստատվել են կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները և բյուջեն, ինչպես նաև 2026 թվականի հիմնական միջոցառումների և ծրագրերի օրակարգը: Որոշվել է շարունակել ռազմավարական ծրագրի փուլային իրականացումը՝ ապահովելով դրա հստակ կապը տարածաշրջանային կենտրոնների գործունեության և անդամ կազմակերպությունների առաջնահերթությունների հետ:

Կառավարման կառուցվածքի բարեփոխման շրջանակում պայմանավորվածություն է ձեռք բերվել Շանհայում ձևավորվող հինգերորդ տարածաշրջանային կենտրոնի ինտեգրման գործընթացի շարունակականության ապահովման վերաբերյալ: Ընդունվել է, որ կառավարման մոդելի հնարավոր փոփոխությունները, ներառյալ

Կառավարիչների խորհրդի կազմի և ներկայացվածության վերանայումը, կներկայացվեն հետագա քննարկման և հաստատման՝ համապատասխան ընթացակարգերի համաձայն:
MVM Ltd. ընկերության տարածաշրջանային պատկանելության փոփոխության վերաբերյալ որոշվել է հարցը ներկայացնել Կառավարիչների խորհրդի քվեարկությանը՝ ապահովելով թափանցիկ և հավասարակշռված որոշման կայացում: Քվեարկությանը կներկայացվեն ինչպես Փարիզյան տարածաշրջանային կենտրոնին միանալու դիմումը, այնպես էլ Շանհայի կենտրոնին միանալու վերաբերյալ առաջարկը:
Արտահանման վերահսկողության և պատժամիջոցների հետ կապված գործընթացների շրջանակում պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել լիցենզավորման մեխանիզմների մշակումը՝ ապահովելով միասնական, թափանցիկ և միջազգային պահանջներին համապատասխան մոտեցում: Միաժամանակ ընդգծվել է անհրաժեշտությունը՝ նվազագույնի հասցնելու այդ գործընթացների բացասական ազդեցությունը տեղեկատվության ազատ փոխանակման և համագործակցության վրա:
Որոշվել է շարունակել համագործակցությունը համապատասխան միջազգային և ազգային կարգավորիչ մարմինների հետ՝ արտահանման վերահսկողության և իրավական համապատասխանության ապահովման նպատակով, ինչպես նաև ակտիվացնել խորհրդատվական գործընթացները՝ ներգրավելով տարածաշրջանային կենտրոններին:
Պայմանավորվածություն է ձեռք բերվել ուժեղացնել տարածաշրջանային կենտրոնների միջև փոխգործակցությունը, ընդլայնել փորձի փոխանակման ծրագրերը և խթանել համատեղ տեխնիկական նախաձեռնությունները՝ ուղղված անդամ կայանների անվտանգության և արդյունավետության բարձրացմանը:
Բացի այդ, վերահաստատվել է կազմակերպության հանձնառությունը՝ պահպանելու բաց, վստահելի և մասնագիտական համագործակցության սկզբունքները՝ անկախ արտաքին քաղաքական և տնտեսական սահմանափակումներից:
Նիստերի արդյունքներով ստորագրվել են համապատասխան արձանագրություններ և որոշումների փաթեթներ, որոնք ամրագրում են ընդունված որոշումները և սահմանում դրանց իրականացման հետագա քայլերը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կայացած նիստերը ևս մեկ անգամ հաստատեցին, որ Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիան շարունակում է պահպանել իր առանցքային դերը գլոբալ միջուկային էներգետիկայի ոլորտում՝ ապահովելով համագործակցության արդյունավետ հարթակ և նպաստելով ատոմային էլեկտրակայանների անվտանգ և հուսալի շահագործմանը:
Նիստերի ընթացքում ներկայացված հաշվետվությունները և զեկույցները վկայում են, որ տարբեր տարածաշրջաններում առկա է թե՛ կայուն առաջընթաց, թե՛ շարունակական բարելավման անհրաժեշտություն: Սա պահանջում է նպատակային աջակցություն, փորձի փոխանակման ակտիվացում և անվտանգության մշակույթի շարունակական զարգացում:
Ընդհանուր առմամբ, ընդունված որոշումները և ձեռք բերված պայմանավորվածությունները միտված են կազմակերպության ինստիտուցիոնալ

կայացմանը, կառավարման համակարգի կատարելագործմանը և միջազգային համագործակցության խորացմանը: Դրանք ստեղծում են ամուր հիմք ՇԿՀԱ-ի հետագա զարգացման համար՝ ապահովելով նրա առաքելության իրականացումը՝ միջուկային էներգետիկայի ոլորտում անվտանգության, հուսալիության և մասնագիտական գերազանցության բարձրագույն մակարդակի հասնելու ուղղությամբ:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյան